

ՐԱԺԱՆՈՐ ԱՎՐՈՒԹԻՒՆ
Պոլիտիկոյ համար
Տարեկան 10 Ձր.
Վեջու սեւայ 7 »
Արտատպանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻՆՆԻ ՎՃԱՒԵԼԻ
—(—)
Կրօնքիտիկի և չճի սրտի
—(—)
Իրանուշահ սոդի 20 սահ-
քիտ և Լրեհիկ աւելի աւե-
գաւենու համար 20 Օլո
գեղջ կրայ :

ՇԱՐՄ

Նամակ և գրամ դրկի
Ամբաստանական հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Г. Хр. Стояновъ.
А Д В О К А Т Ъ

ՄԻՍԻ ԱԹՈՒՆ ԶՈՒՐԶԸ

Հայ ազգին ու եկեղեցիին գոյու-
թեան հետ սեյա առնչութիւն ունե-
ցող խնդիր մը բուսական ժամանակ
ի վեր կըրարեցնէ Ազգ. Վարչութեան
ժողովները : Ողջախոս անձինք կը
յուզուին ու կը սաղանապարհ սեաներով
յարաւոր իրաւասութիւններու յու-
շիկ փճացումը, մինչ պատրիարք ու
վարչութիւն ունայն խնդիրներու
հետամուտ լուս ու մուշ ձեռքէ կը
հանեն ազգային ու եկեղեցական
կարեւոր շահեր :

Միսի խնդրին ակնարկել կուզենք
որ, ինչպէս կը գրէ մեր Պոլսոյ թղթ-
թակիցը, ծանր համեմատութիւն մը
առած է վերջին շարժումն մէջ և
այդ պատճառով Ստան Ժողովը ար-
տասովոր նիստ գումարուեր է անց-
եալ ուրբաթ գաղտնական նիստար-
ութեան կողմէ զրկուած ծանուցա-
գրի մը վրայ խորհրդակցելու հա-
մար : Խնդրին նոր վիճակին մասին
խօսելէ առաջ անհրաժեշտ է համա-
նոտ ակնարկ մը նետել անոր անց-
եալ վիճակին վրայ : Համառոտ կը-
սենք, որովհետեւ այս ընտրութեան
չուրջ երեք տարիէ ի վեր ան կարգի
աղտոտ խնդիրներ անցած զարձա՞ծ
են որ անպակն հաստորի մը մէջ միայն
կրնան ամփոփուիլ :

1895 մայիսին, կառավարական
յանձնարարագրով Ատանա զրկուե-
ցաւ արդի Կրօն. Ժողովի ատենապետ
Գրիգորի Արքեպս. Յովհաննէսեան,
որ անմիջապէս ընտրական գործողու-
թիւններու ձեռնարկելով եկեղեցա-
կան ու աշխարհական պատգամաւոր-
ներ հաւաքեց Ատանայի մէջ և օ-
րէնքի ամէն արամագրութիւնները
լիովին գործադրելէ ետք, յունիս
7ին քուէից ստուար մեծամասնու-
թեամբ Կիլիկիոյ Կաթողիկոս ընտ-
րուեցաւ Ալեքսանդր Գրիգորի Արք-
րազան : Այս ընտրութիւնը կառա-
վարութեան շիջուրն ուզաւ, որով-
հետեւ տարբեր մէկը ընտրուե թե-
լադրութիւն կը լըսէր. ուստի Կրօն
Սիւրբան անուանուող անկանական զաղա-
նի լրտեսի մը միջոցով (այժմ մաք-
սային քննիչ Հոռոս) ան ատեն Պո-
լիս գտնուող Յովհաննէս, Արքանա՞ծ
և Նիկողոս եպիսկոպոսներն ու Կի-
րակոս անուն վարդապետ մը հրա-
ւերուեցան աստիկանութեան զուտը
և նազըմ փաշայի միջոցով ազգայար-
ուեցաւ իրենց բողոքել կատարուած
ընտրութեան զէմ, աւարկելով որ
իրենց մասնակցութիւնը զլայցուած
է, մինչդեռ այս եպիսկոպոսներ զեռ
նոր արձակուած էին կայս. ներու-
մով և Իզմիրեան Պատրիարքի զըր-

ուած էր որ անոնք իր հսկողութեանը
տակ մնան ու որ և է ազգ. գործի
չմասնակցին : Կառավարութիւնը այս
զրկումով ուզեց օգտուիլ ապագայու
համար Իզմիրեանը և բեկանելու
համար Ալեքսանդր ընտրութիւնը :
Յիշեալ եպիսկոպոսները վախնա-
լով որ օր մը թերեւս Ալեքսանդր
գործի զյուս անցնի և սահման զնէ
իրենց սանձարձակ ստանկութեան,
Սիւրբանի մը ու կարգազուրկ Մամբ-
րէի մը տոջեւ ինկած ինքզինքնին
Ատանա նետեցին, ուր շատ ցուրտ
ընդունելութիւն գտան ժողովուրդէն.
Գուցէ սպանուին իսկ եթէ Գրիգորիս
Արքեպիսկոպոս հայրաքար չյորդորէր
Ժողովուրդը խոհեմութեամբ վար-
ուիլ :

Նոյն միջոցին Ֆիլիպէ հրատարա-
կուող թուրք թերթերու մէջ Սիւրբան
անլուր ամբաստանութիւններ կը
գրէր Ալեքսանդրի զէմ, և այս թեր-
թերը հոլաւորուելով թուրք ժո-
ղովրդեան մէջ կը կարգացուէին :

Երբ այս Ստեղծ չորսերը շատ պազ
ընդունելութիւն գտան Ատանայի մէջ,
Սիւրբանը և հոն ալ Միսի մայր
տաճարին զաները իրենց զէմ զոց
գտան. Կիրակոս վարդապետ աւար-
կելով որ Պոլսի Պատրիարքը զիրենք
հոգեւոր պաշտօնէ արդիւած է, եւ
կեցաւ Աթոռին գործերուն խառ-
նուելէ : Բայց հարկ էր գործնական
բան մը ցուցնել կառավարութեան,
ուստի առտու մը ելան հոչակեցին
թէ իրենք Կաթանձեան Յովհաննէսը
օժած են «կաթողիկոս Տան Կիլի-
կիոյ» :

Այս լուրը հաճոյք պատճառեց կա-
ռավարութեան. բայց Կիլիկիոյ թե-
մականները զարձակալ անորդուելի
մնացին և յուսա մերժեցին Յով-
հաննէսը ճանչնալ իրբեւ կաթողի-
կոս Կիլիկիոյ. ականջ չկախեցին
կառավարական սաստիւրուն ու սպառ-
նալիքներուն, և շատեր բանտ ու
աքսոր աչք առնելով թող չտուին
որ Կաթանձեան զիրք մը ստանայ,
երբ Սիւրբ Ատանա զարձաւ ան ինք-
զինքը կաթողիկոս ճանչննելու հա-
մար :

Այս Ֆիլաւոսի տեսեց մինչեւ որ
ուելի ծանրակշիռ զէպքեր վրայ գա-
լով Իզմիրեան հրաժարեցաւ : Բայց
այդ միջոցին չորսերը ուղղակի և
անուղղակի զմեծներ կընէին Գուռ
և Երլազ ու կընէին թէ «Պոլսի
պատրիարքարանին նպատակն է բոլոր
հայերը Մոսկովի մէջ նստող կաթո-
ղիկոսին գերիշխանութեան տակ զը-
նել. իսկ մասնաւորապէս Իզմիրեան
նի նպատակն է Ալեքսանդրով Կի-
լիկեան յեղափոխութիւն մը պատ-
րասել » : Այս զիմու մներ ամէն կողմ
կրկնուեցան և խարեցին միամիտ

պաշտօնատարներ : Նոյն ատենի
զատական նախարար Բիզա փաշան
(այժմ կուսակալ Սեյանիկի) կար որ
Իզմիրեանի տուած բացատրու-
թեանց վրայ ըմբոսեց ճշմարտութիւ-
նը և թափանցեց այդ խաղերուն
խորը, բայց իր պաշտօնանկութիւնն
ալ չուշացաւ :

Վերջապէս այդ չորսերը որոնք
պաշտօնէ զազրեցուցուած էին որոշ-
մամբ կրօն. Ժողովի, ընդերկար թա-
փառեցան Պոլսի մէջ ու Ատանա վե-
րադարձան, վերջին փորձ մըն ալ
ընկուեւ, որ զարձակալ ապարդիւն
մնաց :

Բարթոլոմէոսի տեղապահութեան
օրով այս խնդիրը քնացած էր, թե-
պէս կառավարութիւնը ստէպ կըսէր
որ պէտք է բեկանել Ալեքսանդրի
ընտրութիւնը. բայց Բարթոլոմէոս
վախնալով որ իր պատրիարքութիւնը
վրայ կուտայ լուսազոյն սեպեց իւր-
բիւր քննարկել մինչեւ որ պատրի-
արքութեան տարիներէ ի վեր ցան-
կացած աթոռին վրայ ցատքել յաջո-
ղի. բայց իր սրունքները չկրցան
մինչեւ այդ փշոտ աթոռին հասնիլ,
ու Օրմանեանի փորին վիճակեցաւ
հոն հանգչիլ :

Օրմանեան ի սկզբան ամէն արա-
մադրութիւն ցոյց կուտար կատար-
ուած ընտրութիւնը պաշտպանելու.
բայց քանի մը քարոզներով ու հան-
դիսներով ժողովուրդը բռնելէ ետք,
ուզեց կառավարութեան ալ աչքը
մտնել. և սկսաւ Ալեքսանդր ըն-
տրութեան բեկումը պատրաստել
Քաղ. Ժողովի մէկ քանի անգամնե-
րուն հետ :

Արթին փաշան իր զիպլոմասին
ունէր. պէտք էր ազգասէր երեւնար
այս խնդրին մէջ ալ. ուստի աղուե-
սի արցունքներ կը թափէր ու շա-
րունակ կը յուսադրէր թէ կարելի է
Ալեքսանդր վաւերացնել, ձեռքի
տակէ հակառակը թկադրելով :

Կրօն. Ժողովի երկու ատենապետ-
ները մինչեւ վերջը զէմ կեցան այս
զաղափարին և ամէն վտանգ աչք
ստնելով «ոչ կարեմք» ըսին բացէ
բաց : Եւ Ստան Ժողովի այն նստին
մէջ ուր Ալեքսանդր ընտրութիւնը
բեկանեցին և պատրիարք ու Արթին
փաշա, ինչպէ՞ նաեւ Ստեփան փաշա
ու Նորատուէնկեան որոնք յաջողած
էին եպիսկոպոսու ձէվահիրձեանը
ու Այվազեանը ու երկու նոյնչափ
աննչան քահանաներ ալ իրենց կող-
մը շահիլ, Գրիգորիս Յովհաննէսեան
և Վահրամ Մանկուէնի ըսին իրենց.
«այս բեկումը երկանց սկիզբն է,
ապագայ պատահականութեանց պա-
տասխանատուն գուք էք. կը տու-
նէք ինչե՞ր պիտի պատահին » : Եւ
այս գուշակութիւն տակաւ կատար-

ուեցաւ : Կառավարութիւնը նախ
Սապահանի տեղապահութիւնը չը
ճանչցաւ, կաթողիկոս ընտրելի և
կեղեցականին Ստեղծ ըլլալը պայ-
ման դրաւ և ցանկ պահանջեց :

Ընդդիմութիւնը անօգուտ էր.
միւս կողմէ փորձեր կըլլային Պէ-
րութ գտնուող Կաթանձեանը Ստի
աթոռին վրայ նստեցնել : Պատրիարք
ու վարչութիւն ալ երես չունէին,
բայց Օրմանեան զեռ յուսալից էր
և տեղապահին պաշտօնը վաւերա-
ցնել սաղու համար զիմուներ կը-
նէր, որոնք ապարդիւն կը մնային :
Հուսկ ուրիմն անցեալ երկուշարթի
զատական նախարարութիւնը զրկեր
է պատրիարքարան իր վերջնագիրը,
որուն իմաստը մեր թղթակիցը նա-
մասուելու հաղորդեց :

Հետաքրքիր ենք տեսնելու թէ հի-
մա ի՞նչ պիտի ընէ վարչութիւնը :

Շատ պարզ է ըլլալիքը : Բուռն
կերպով մերժելու ձեւեր, թոյլ պա-
տասխան մը, և վերջապէս համա-
կերպելու քուէ մը, որ մեծամասնու-
թիւն կը գտնէ անչուշա : Բացառա-
բար բառը որուն իմաստը և սահմա-
նը շատ լաւ գիտէ Եուսուֆեան Տիգ-
րան էք. այս պարագային մէջ ալ
հանդիսաւորապէս պիտի արտասան-
ուի (ինչպէս արտասանուեցաւ Մա-
կարի կաթողիկոսութեան վաւե-
րացման պահուն) և ամբան գեղա-
ծի՞ծաղ առտու մը Ալեքեան մը կամ
Կաթանձեան մը պիտի տեսնենք Կի-
լիկիոյ աթոռին վրայ բազմած :

Ազգային անկապտելի իրաւունք-
ներու այլքան հիմնայատակ փճաց-
ման մը պատասխանատուութեան
աղատելու համար պատրիարք և
վարչութիւն հրաժարելէ զատ ուրիշ
ի՞նչ միջոց ունին : Միւս կողմէ Կի-
լիկիոյ թեմականներն ալ պէտք է
զիտնան թէ ինչե՞ր կը դառնան ի-
րենց զլիտուն վրայ : Ան եկեղեցա-
կանները որոնք կաթողիկոսական
ընտրելի կը ներկայացուին իրեն,
արդէն պատուհասներ եղած են ազ-
գին զլիտուն և հիմա Միս կը զը-
կուին՝ անչքութեան և անպատու-
ութեան մատնելու այն աթոռը, որ
ազգին ու եկեղեցիին սատական
անցեալին մեծագոյն կոթողներէն մէկն
եղած է և որ անխուսափելի կերպով
պիտի անցնի ապիկար կամ ազգային
նուիրական շահերու թշնամի եկե-
ղեցականի մը : Ան ատեն Կիլիկիոյ
բազմահայ թեմը ալ պիտի ըլլայ խոռ-
վու թիւններու, զաւարքութիւննե-
րու ու ազգային զոյժունութեան
բիտուն ու վառ հնոց մը :

—(—)

ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

—)(—

ՀԵՏԵՒՈՂՈՒԹՅՈՒՆ

Անապատին մեջ ինկած եւ սր-
Juner,
Մոլորուն քայլով ջեւ զիսեր
յիւս n'ar...

Բայց անոնք երկինք կը շոյան
յոյոյոյ,
Ցիրուցան վստուած բոցեր ա-
յաւնոյ .
Եւ զոր սեղ անոնք սրտիկս
անհատեր

Եւ անա կը յան հովեր անկե
յի,
Կուգայ վարորդի ձայնով ո-
րոսի .

Կըզգաւ քե պիտի մեռնիմ հոս
միակ,
Ասանց գրեկեղու ոչ միկ ջս-
յոյսանք :

Անապատն անկ, մեր կեանքն
ե փրջոս,
Անապով լեցուն, բոլոր խորս
ու յորս,
Որ մեկ կը անգնիմք ար-
յիւնքով անույ,
Չունենով կը ի, յոյսի մը նը-
շու :

Այն յոյսերու մեջ իրարու յի-
մաց,
Կեղանք յարիմով շրեւա չը
խորհուած,
Եւ սուգնապայտոյ ծանրո շու-
ծի սակ,
Կը յոյսինքն ճընած կը իսկեմք
դարակ :

—)(—

ՕՐԸ ՕՐԻՆ

Պ. ՏՐ. ՄԱԼԻԱԶՈՒՆԻ

—)(—

Ազնուականի տաղաւթն եւ օտար
մահանունի մը երեւոյթի մասի ճը-
մարիտ հայ մըն է որ կը ծածկուի,
հասնողոտ սրտով ու սուր լմացակա-
նութեամբ օժտուած :

Բնիկ Աղիւսցի (Ալպանիա) շատ
ծանօթ բնականութի մը որդին է . զեռ
հազիւ 28-30 տարեկան կայ . իր
հմայիչ թու խ աչքերը, սրտաւոր սեւ
մօրուքը, հանդարտ, խոսուն եւ մըշ-
տաժպիտ գէւքն արտայայտութիւնը
չափազանց համակրելի եւ ուշադրաւ
կընծայեն զիւնազարտութեան այս
սկանակը :

Գիշ խօսող, բայց շատ կարգացող
ու գրող մըն է Պ. Մալիազունի . իր
չանկան խօսակցութիւնները սրբան
ալ երկարին, չեն ձանձրացնէր բնու,
այնքան համեղ ու զիւ թէ կն ա-
նունք :

Իր նախնական ուսումը ստացած
է Պոլիս Օրթոդոքսի Հայկական Կրթ-
թարանին մէջ որուն 1888 տարեւը-
ջանի էն փայլուն աշակերտն եղած
է . վարժարանը ձգելէն յետոյ կեր-
թայ իր ծննդավայրը եւ հին քիչ
ժամանակուան մէջ կը մտնէ աւրս-
տիական հիւպատոսարանը, նախ
քարտուղարի եւ ապա թարգմանի
պաշտօնով :

Ամբողջ 7 տարիներ իր պաշտօնը
մեծ յաջողակութեամբ վարելէ յետոյ
կարժանանայ Ֆրանսիոյ Նոզիֆ կայսեր,
Պապին եւ Մէճիթիէի պատուանշան-
ներուն, ինչպէս նաև ազնուական
սը արտոգորին զոր խնամով կը կրէ
միշտ իր կրծատուած անուան հետ :
1894ին Պ. Մալիազունի փափագելով
իր կարողութիւնները աւելի մեծ
ասպարեզի մը մէջ ցոյց տալ, կը
խնդրէ Աւստրիոյ կառավարութեանէն
որ զինքը Պոլիս փոխադրուի : Իր
խնդրանքը կը մեղմուի հայ ըլլա-
լուն . կառավարիկն իրեն թոշակը ա-

ւելցնել որպէս զի Սկիւպի մէջ մը-
նայ, սակայն ինք կը մերժէ եւ
1895ին վերջնապէս կը հրաժարի իր
պաշտօնէն :

Աղիւսցի ձգելով կայսրիկ եւրոպա-
կան բոլոր մայրաքաղաքները, կը
տեսնուի հոն շատ մը պետական ան-
ձերու հետ՝ չնորձիւ յանձնարարա-
կաններուն եւ վիտայագիւնուն, եւ
վերջապէս կորոչէ Բարիզ հաստա-
ուելի եւ հոն յազոյս թիւամբ գրադիլ :

Արեւելքի եւ Պալատիկան թերա-
կազմին վրայ բրած ուսումնասիրու-
թիւնները, զրելու կարողութիւնը,
ինչպէս նաև օրէնքներու մասին
խորին հմտութիւնը՝ զինքը կեփած,
հասուցած էին ա՛յնպիսի վիճակի մը
որ Բարիզի մէջ շատ մը կարեւոր
անձեր մեծ ընդունելութիւն կընեն
իրեն եւ կը քաջալերեն զինքը որ
իր նպատակը իրականացնէ, մանա-
ւանդ երբ օժտուած է 7-8 լեզունե-
րով զորս բաւական յաջողութեամբ
կը գրէ եւ կը խօսի :

Ուստի Լա Ֆրանսա շէքրանմի ա-
նուն շարթաթիւնը մը կը հիմնէ
խմբագրատեղան թիւնը ինք ստանձ-
նելով եւ առջի օրէն լսկ ցոյց կու-
տայ թէ ինք հայ մըն է, նպատակ
հայկական դատին եւ սիրելի թըշ-
նամի մը թուրքին :

Որքան որ իր թերթը նուիրուած
պիտի ըլլար ֆրանսական շահերուն
պայքանեան խնդիրներուն մէջ, սա-
կայն հայու արվեր զինքը հանդարտ
չի ձգեր եւ Հայաստանի կոտորածնե-
րուն առթիւ 4-5 խիստ յօգուածնե-
րով կը պիտարակէ թուրքին զոր-
ծած խժոժութիւնները :

Թերթին հրատարակութիւնը շատ
երկար չի տևեր, վասն զի անցեալ
տարի Յունո-Թրքական պատերազ-
մին առեր Պ. Մալիազունի Բարի-
զին Նոնի, Էլիէնքանի, լա Ֆրանս-
սի, Իլլիւստրաիոնի եւ Լոնտոնէն
Իլլիստրաիոնի Լընցըն Նիլզի ու կրա-
փիթի թղթակից ընտրուելով կը իր-
կուի Պոլսոյ ճամբով յունական սահ-
մանադուրը :

Պ. Մալիազունի Աւստրիական
անցագրով Պոլիս հասնելուն երրորդ

օրն իսկ առաւօտուն կը ձերբակալ-
ուի Սրբանախա քաֆէի մէջ եւ կը
տարուի կեղծոնական բանաբ :

17 օրուան անաւանի չարչա-
րանքներէ յետոյ Պոլսոյ Ֆրանսական
գետական Պ. Ֆամպօնի միջամտութեան
վրայ օր մըն ալ զիչերանց գաղտնի
կերպով կը զնեն զինքը ձերբու յա-
տուկ վակօնը մը մէջ եւ Ալպանիա
կարտրեն, 5 օր սաժանելի ճամ-
բորդութիւն մը ընել տալով այդ
չորքտանիներու ուղեկցու թիւնովը :
8 ամիս Պ. Մալիազունի կը գեղե-
րի Ալպանիոյ մէջ եւ յետոյ օր մը
աջակցութեամբ սերպ զիւղացիներու
10 օր ընտերու մէջ թափանկէ
յետոյ օգ. 15-ին կանցնի սերպ հո-
ղին վրայ հակառակ 3000 թիւք
զինուորներուն հսկողութեան, ու
րոնք կը ստրածուին Ալպանիոյ սահ-
մանադիւնի վրայ :

Սիրպիւնը զարձակ Բարիզ կանց-
նի եւ հոն այլ եւս կորոչէ զրական
աշխատութիւններով զբաղել . որոց
անդրանիկը վերջերս հրատարակեց,
Հումարաւորիւն եւ արեւելեան իրն-
յիր խորագրով :

Այս աշխատութիւնը որ լուրջ ու-
սումնասիրութեան մը արդիւնք է,
զովասով բնուցումեցու եւրոպական
մասուլէն եւ իր տեսակին մէջ միակը
հոչակցին . Պ. Հանթօ եւ կոմս
Մուրալիկ իրենց մասնաւոր նա-
մակներով չնորհաւորած են զինքը
եւ խոստովանած զրքին շահեկանու-
թիւնը :

Ասկից զատ Պ. Մալիազունի պատ-
րասած ունի Պուլկարիոյ, Սերպիոյ,
Մակեդոնիոյ ինչպէս նաև թուրք
զեպանաստանց շարքը անուով ու-
սումնասիրութիւններ որոնք հեաղ-
հեաէ հրատարակութեան պիտի արբ-
ուին :

Յաջողութիւն մեր սաղանդաւոր
հայրենակցին որ իր ունեցած ձիրքե-
րով հայ ազգին պատու ու փառք
կը բերէ :

Ա.ԶԱ.Ս

—)(—

ԴԱՍԱԹՈՒՐՈՒՄԻՆ Պ. ՍԱՊԱԶ-ԳԻՒԼԵԱՆԻ

Մայիս 3, կիրակի օր, Ռուս-
չուքի ընթերցարանին մէջ տեղի
ունեցաւ Պրն. Սապազ-Գիւլեանի
դասախօսութիւնը, կանխաւ ծա-
նուցուած ծրագրին համաձայն :

Պ. դասախօսը համառօտակի
զժադրելէ յետոյ տնտեսական
գիտութեանց առարկան եւ ար-
դիւնարեական այն շրջանները
զորս մարդ անցուցած է, եր-
կարօրէն բացատրեց տնտեսա-
գիտական մեթոտներն ու դպրոց-
ները, Առաջին դպրոցը, ըսաւ,
կը կոչուի ազատական՝ իր լեւի-
փո (թոյլ տալ ընել) հոչակաւոր
բանաձեւին համար, որ իր նշա-
նաբանը դարձած է : Այդ գըզ-
րոցը թէեւ տնտեսագիտութեան
մեծ ծառայութիւններ մատուցած
է, բայց այսօր ընկերութեան չի
մատակարարեր զեկաւարիչ սկըզ-
բունքներ : Այդ դպրոցի սկըզ-
բունքներն են . Ա. մարդկային
ընկերութիւնները կը կառավա-
րուին այնպիսի բնական օրէնք-
ներով որ մարդ չկրնար զայն

փոխել, նոյն իսկ եթէ ուզէր փո-
խել, վասն զի այդ օրէնքները
յառաջացնողները մարդիկ չեն,
ե ոչ ալ տառնց փոփոխութիւնը
մարդկանց կամքէն կախուած է :
Ասկէց զատ, այդ դպրոցի հե-
տեւորները կը պնդեն որ մարդ
ոչ մէկ շահ չպիտի կարողանար
ունենալ այդ օրէնքները փոխե-
լով, որովհետեւ տառնք լուսա-
զոյններն են, հետեւորար տըն-
տեսագէտի պարտականութիւնն է
զանեւ այդ բնական օրէնքները,
իսկ անհատները եւ կառավարու-
թիւնները պարտաւոր են աշխա-
տելու որ այդ օրէնքները կեանք
քի մէջ իրագործուին : Բ. այդ
օրէնքները բնաւ հակառակ չեն
մարդկային ազատութեան, այլ
ընդհակառակը ուղիղ արտայայ-
տութիւնն են այն յարաբերու-
թեանց, որոնք ինքնաբերաբար
կը հաստատուին ամէն տեղ՝ ուր
մարդիկ ազատ են թողուած զոր-
ծելու «իրենց սեպհական շահե-
րու համաձայն» : Այս պարագա-
յին, անհատական շահերու մի-
ջեւ, որոնք ըստ երեւոյթին ի-
րարու հակառակ են, կը հաստա-

տուի «նեղրաշնակութիւն» մը,
որ իր կողմէ բնական կարողը,
ուստի եւ բարձր է ամէն արհես-
տական բազկացու թիւններէ, զորս
մարդ կարող է երեւակայել : Գ.
ուրեմն օրէնքերի պարտականու-
թիւնն է, եթէ կը փափագի ըն-
կերային կարողը եւ յառաջդիմու-
թիւնը ապահովել, կարելի եղա-
ծին չափ զարգացնելու այդ ան-
հատական նախաձեռնութիւնները
եւ հեռացնելու անոր խոչընդոտ ե-
ղող ամէն արգելքները, հետե-
ւորար «պետութեան միջամտու-
թիւնը պիտի ըլլայ ըստ կարել-
ւոյն նուազ», այնքան որքան որ
անհրաժեշտ է անհատի եւ ընկե-
րութեան ապահովութեանը հա-
մար :

Այդ դպրոցի պաշտպաններու
վերեւ յիշուած փաստերը մէջ
բերելէ յետոյ, Պ. դասախօսը
յայտնեց որ այդ վարդապետու-
թիւններէն եւ ոչ մէկը կարելի է
ընդունիլ, որովհետեւ այդ գըզ-
րոցը շատ լուստես է եւ միան-
գամայն միտում ունի կուռակցա-
կան օրիէ թերագրուած՝ ներկայ
ընկերային կալմակերպութիւնը

արդարացնել, որ մասամբ հե-
տեւանք է պատերազմական իրո-
ղութեանց եւ աշխարհակալու-
թեանց, եւ մասամբ՝ այն դրական
օրէնքներուն զորս ընկերութեան
ախրապետող դասակարգը գրած
է ի նպատակին, իր տիրապե-
տութիւնը յարատեւելու համար .
հետեւարար սխալ է այն թէզը,
թէ ներկայ տնտեսական հաստա-
տութիւնները անհնար է փոփո-
խել, որովհետեւ զանանք զեկա-
վարող բնական օրէնքները ան-
փոփոխ են : Ժամանակակից գի-
տութիւնը ընդունելով որ զլիսա-
ւոր օրէնքը շրջափոխութեան
(կիօլիսիս) օրէնքն է, կապա-
ցուցանէ որ օրէնքները գէժ չեն
փոփոխութեան սկզբունքն, այլ
այդ սկզբունքով է որ միայն կը
յարաւ եւեն իրենց գոյութիւնը :
Եւ ոչ միայն տնտեսական իրո-
ղութիւնները ու հաստատութիւն-
ները կրնան փոխուիլ շրջափո-
խութեան օրէնքով, այլ մեր
կուքն իսկ կարող է որոշել թէ
որպիսի փոփոխութիւններ պէտք
է առաջ բերել տառնց մէջ :

(Մնացեալը յաջորդող)

մըն ալ ընել տարագիր պան-
դուխաներուն իրենց աւերած
հայրենիքը վերագառնալու, վա-
րուցանի ժամանակէն առաջ :

Կեսարիոյ թեմէն միաձայ-
նութեամբ խնդրուած է առաջ-
նորդ Տրդատ վարդապետի եպիս-
կոպոստոսը : Թէեւ նոր եպիս-
կոպոստոսը հաշիւը կորսնցուցած
ենք, բայց կը կարծենք թէ
«հայկական ձեռագրերու» հեղի-
նակին զուրը արժանի է չա-
թալթազով մը զարգարուելու :

Ինչպէս յայտնի է, Պոլսոյ
կեդր. վարժարանին «մօտան»
անցնելէն ետքը ուսումնական
խորհուրդը վարժապետանոցներ
բանալու գաղափարը կը մշակէր :
Արդ, երկու վարժապետանոցնե-
րու հաստատման ծրագիրը ա-
ւարած ըլլալով պատրիարքին
մատուցուեց է եւ սնորհիւթիւն-
ներ ինքուրեւ են անմիջա՛յն
բացման համար :

Կայս. իրաւէտով թիկնա-
պահ Հիւանի փաշա և Սիւլէյման
պէյ կարին պիտի երթան պաշ-
տօնով : Հայաստան զրկուած օսմ.
բոլոր պաշտօնատարներէն բե-
րանինս երած՝ իրաւունք ունինք
միշտ տակուսով և կասկածներով
վերաբերուելու գէպ այս առա-
քելութիւնները :

Բաղէշէն կը գրեն թէ
Խնդրակատար Ս. Աստուածածնայ
վանքին մէջ բացուած որբանոցը,
չնորհիւ ապիկար հաճի աղանե-
րու և խնկարկու տիրացուի մը
այնքան գէշ կը մատակարարուի
որ բորտութիւն սկսեր է ճարա-
կիլ խնամքի այդ տան մէջ :
Յանցանքը անշուշտ աւելի Տեղա-
պահին եւ միւս աղագայիններուն
է որ սիրտինքի կարօտ այս սի-
րելի փոքրերուն հոգը անարժան-
ներու ձեռքը կը թողու :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Անցեալ մայիս 11 ին Բէօս-
տէնճէի մէջ մեծ հրդհճ մը ծա-
ղելով, ուսումնական շոգենաւա-
յին ընկերութեան և երկաթու-
ղին մթերանոցները այրեր են :
Վնասը 300,000 ֆրանք կը հաշ-
ուուի :

Տոմարոսի թուրք գերեզմա-
նատան մէջ մարմարէ յիշատա-
կարան մը կանգնուեց է սա առ-
ձանագրութիւնով « յիշատակ
1897 ի թուրք և հելլէն պատե-
րազմին . . . » : Անշուշտ գրաքն-
նութիւնը թոյլ չէ տուած քանգա-
կագործին աւելցնելու « . . . մէջ
խաւամին գործած խժգժութիւն-
ներուն » :

Վանի առաջնորդարանէն
Պատրիարքարան հասած հեռա-
գիր մը կը ծանուցանէ թէ Սուլ-
թանը ներում շնորհեր է 23 բան-
տարկեալներու որոնց միակ յան-
ցանքը անշուշտ հայ ըլլալին
էր :

—Մարտ Շահազիզեանի երես-
նամնայ զրական ու մանկավար-
ժակչն գործունէութեան յորել-
եան ին առթիւ գումարներ նուիր-
ուած էին ծանօթ ուսուսչայ զրա-
գէտին : Այդ գումարներ իրենց
տակոսներով 8,000 ռուպլիի հա-
սած են, զոր կաշարեան ճեմա-
րանի ուսուցիչը նուիրած է կով-
կասի հայոց Բարեգործական ըն-
կերութեան, որպէս զի այդ գու-
մարը առաջին գրամագլուխ ըլ-
լայ Արտիկան-Նաղարեան զրա-
կան հիմնարկութեան մը և ատով
բարեգործական ընկերութիւնը
օգնէ կարօտ զրագէտներուն :

Կրթական նախարարութեան
մէջ հրամանին համեմատ, պուլ-
կարական բոլոր դպրոցներուն
մէջ պիտի զետեղուի կենդանա-
գիրը աղագային մեծ բարերար
Էվլոկիու Յօրկիէվի որուն նուիր-
ած գումարներով մօտերս Սօ-
ֆիաի մէջ համալսարանի յաս-
կացուած հոյակապ շէնք մը պի-
տի կառուցուի :

Քըղանլըքէ կը գրեն «Բուռիէ
տէ պալքանի» թէ վարդի հիւ-
թի արտագրութիւնը վերջին
տարիէն 25 առ հարիւր նուաշ
է այս տարի : Ասոր պատճառը
վերջին գարնան ցրտութիւնը և
խոնաւութիւնը եղած են : և Սա-
կայն գնբու բարձրացումը կախ-
ուած է սպանօսմերիկեան պա-
տերազմին վերջանալէն :

Վառնայի Ս. Կեդր. եկեղեցիին
թաղ. խորհրդին կողմէ աղքատնե-
րու համար ստորին փայտով շինուած
այն աղմկայոյզ խաչալէմը որուն
ցաւալի կորուստը անցած օր ծանու-
ցինք, գտնուեց է եկեղեցիին մէջ
սրմագարանէն :

Ուրախ ենք ծանուցանու թէ ա-
սով ազնուական մեռելներու յատուկ
ծանրագին խաչալէմին պատիւը փր-
կուած եղաւ :

Շ Ն Ո Ր Շ Ա Կ Ա Լ Ի Բ

Խմբագրութիւնս կը փութայ իր
չնորհակալիքը յայտնել յարգոյ Տ.
Տոքթ. Թովմասեանի, որ իր մասնա-
գիտական ճարտարութեամբ քիչ օր-
ուան մէջ զարմանեց և աղեկցուց
մեր գրաչարք :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Հակառակ Պ. Սակազոյի յայ-
տարարութեան թէ Սպանիա կը ը-
նայ երկու տարի եւս պատերազ-
միլ, շատ հաւանական է որ շատ
չանցած խաղաղութիւնը կնքուի :
Սպանիա ապահովպէս կորսն-
ցուցած է յալթութիւնը. աս
մասին ա՛լ պատրանք չունի ինք :
Այլ եւս ոչ նաւատորմ, ոչ զէնք,
ոչ ինչ ունի որով կարենայ եր-
կարածկել անօդուտ պայքար մը :
Սէրվիլիաի նաւատորմը կընայ
գրէթէ կորուսած համարուել .
իսկ Գամարաի տորմիլը, որ տա-

կաի Գատի. քս է և որ կերուայ
թէ անկարող է ծով ելլալ, ան-
արժէք բան մըն է երբ ըսենք
թէ բացի երկու նաւերէ որ բա-
ւական լաւ են, մնացածն քրա-
ւորն ալ թողթի վրայ երեւնա-
լիք բաներ են :

Ան առեն ինչ հարկ ցնորք-
ներով պարտիլ և հեռադրական
գործակալութիւններուն հրատա-
րակել սալ թէ Մատրիտի նա-
խարարաց խորհուրդը Յիլիպ-
պեաններու մասին որոշումներ
տուած է որոնք զազանի պիտի
պահուին :

Իււնորքէ յունիս 1 հեռագիր
մը կը ծանուցանէ թէ Մանիլան
անձնատուր է եղեր : Ասիկա հա-
ւանօրէն կանխահաւ լուր մը ըլ-
լայ, բայց կանխահա՛ս միայն,
սրովհետեւ ինչպէս կարելի է
Աւկապի զօրավարին օգնութիւն
չըկել, որուն պէտք ունի զիմա-
կալելու համար ծովի ու ցամաքի
երկու հակառակորդներուն : Եոյն
խոկ եթէ ժամանակ ըլլար, հոն
նաւեր զրկելը անօդուտ էր, ո-
րովհետեւ անոնք չպիտի կըր-
նային զլմագրել Տուի ծովակա-
լին :

Եթէ Մանիլան իսկապէս ընկ-
նուած է, շատ հաւանական է որ
ապստամբներուն անձնատուր և
զած է : Թէեւ Ակուինալոս ա-
պստամբապետին շինուորները
կիսավայրենի Մալայեցիներ են,
սակայն ինք արիւնլիակ մարդ
չէ և իր մէջ վերջին յայտարա-
րութեամբ Յիլիպպեան բնիկնե-
րուն կըսէ թէ կեանքի, ինչքի
և պատուի ապահովութիւնը ինք
կերաշխատութե անխտիր ամէնպա-
գի անհատներու :

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

Պոլսոյ գրաքննութիւնը արգի-
ւեր է լրագիրներուն հրատարա-
կել էտհէմ փաշաի կենսագրու-
թիւնը : Տոմարոսի յաղթականը
արգէն Պոլիս գտնուելէն ի վեր,
ամէն ջանք թափուած է նսնմա-
ցընելու համար անոր փառքը :
Սուլթանին քաղաքականութիւնն
է ոչ ոքի փառաւորութիւնը իր իշ-
խանութեան օրով :

Յէրոսիմանտ իշխանը յուլիս
10ին պիտի այցելէ Փեթերոս-
պօլսկ, Ռուսիոյ Չարին :

Եգիպտական թերթերը կը-
սեն թէ օսմ. կառավարութիւնը
իմանալով որ վերին Եգիպտոսի
և Սուտանի ռազմագիտական եր-
կաթուղիները անգլ. ընկերու-
թեան մը ծախելու մտադրու-
թիւն կայ, խտիվական կառավա-
րութեան ուղղեր է խիստ կեր-
պով խմբագրուած բողոքագիր
մը : Եգիպտոսի նախարարաց
խորհուրդը գումարուեր է պա-
տասխանելու համար այս ծանու-
ցագրին : Անգլ. գործակաւտար
Լորտ Բրոմբը օսմ. այս միջա-
մտութեան համար բուն գժգո-
հութիւն յայտնեց է :

—)(—

ՍԱՓՐԻՉ

—)(—

Պատեւ ունիմ ծանուցանել արգոյ
հասարակութեան թէ՛ ժամանակէ մը
ի վեր աշխատելով Օթէլ Գոմէրսիաի
կից սպիրիչ Անկէլ Եւսէմոֆի քով
և ակուոյս պուլկար եւ հայ պատ-
ուարժան յաճախորդացս վստահու-
թիւնն առ իս գրաւած լինելով, այս
անգամ մասնաւոր խանութ մը բացած
եմ Ուլիցա Բրելաւալսքա, օթէլ իմքէ-
րկալի կից :

Լիւայոյս եմ թէ պատուարժան հասա-
րակութիւնը չպիտի զրանայ շարու-
նակել ինձ իր քաջակերք, այցելելով
այսուհետեւ իմ նոր խանութը ուր
պիտի գտնէ կանոնաւոր գրք և ա-
մենամեծ մաքրութիւն :

Միհրաւ Սեդրակեան
Եւ իմ ընկերս
Սերոս Ծաղիկեան

ՃԱՇՍԻԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՒԻՕԻՆ ԺԻՇԻ ԴԵՄԸ
կը բանեցունէ Պ. Տիգրան Թիֆլիսկի-
ւեան և ընկի :

Արհեստին մէջ կատարելութեան հա-
սած Լրիտասարգ հայու մը ձեռամբ
սարքուած այս հովասուն, մաքուր
ու զեղչական հաստատութիւն ոչ մի-
այն պատիւ կը բերէ հայ ճաշակին,
այլ և մեծ ինքն մը կըրլայ որ հայ
ու օտար փափկակերներ իրենց գար-
նանային և ամառնային ժամադար-
վայր մը ընեն զայն գրօսելու և
ճաշելու : Պոստոսեան ախորժարք
հովիտուն ու Սեւ ծովի կապոյտ տա-
րածութեան առջեւ :

Հակասակ այս հրապուրիչ առաւե-
րութիւններուն յաճախորդները պի-
տի գտնեն յոյժ զիւրամաշկի զի-
ներ թէ ըմպելիքի թէ կերակուրնե-
րու մասին : 10

Պ Օ Ր Ս Ա

—)(—

Վառնա 6 Յունիս
ՊՈՒՂՏԱՅ
Վաղօս եօգ, լիպրա 47—51, հէքթօլ.
9.50—10 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ.
8.50—10 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 4.80—5.20
ֆրանք

ՄԸՍԸԲ
Վաղօս եօգ, լիպրա 57—58 հէքթօլ.
7—7.50 ֆրանք

Արապա, լիպրա 57—60 հէքթօլ.
7.80—8 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ
100 օգգաւը 15—20 ֆրանք մալա
կէօրէ

Առապա մուամէլէսի նարօլոն 21
ֆրանք հիսապը իլէ սիր.

Կիւնտէ 2—3 արապա պուղտայ,
3—4 արապա արբա, կէլմէքտէ
սիր :

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»Ի
—)(—

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցետոմս, նամա-
կաղուլս, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազգ, ինչպէս նաև
պրօշիււններ :

Գիներն յոյժ գեւրամատչելի .
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ և փութով կը կատար-
ուին :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »
—)(—

Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալա, թանկիզ Կէօղիպէօլիքեանի
խանութը, Սասուն սրճարանի ծխա-
վաճառին քով և Ապտիւրբանման
մզկիթին գէմը հայկական գրատու-
նը, Ա. Զարբանէլեանի քով :

Մատուցող «Взаимность» Варна.